


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿԵՆՐԸ ՔԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՑ

ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

U. S. U. P. ԹԻՒ 42

ՆԻՒ ԵՈՐԳ, ՇԱԲԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 27, 1898

ԳԻՆ 3 ՍԷՆՑ

ԱՉԳԱՅԻՆ

Լ'ամսէնի մէջ կը կարգանք Պ. Ատամ Ետրգովիչ կալիցիոյ նախարար անուանուած է Թուն կոմսի գահլիճին մէջ: Առաջին անգամն է որ Լեհաստանի մէջ Լայ մը նախարար կ'ընդունուի: (Հունգարիա արգէն երկու Հայագրի նախարարներ ունեցած է): Նորընտիր նախարարը որ իրաւագիտութեան տօքթօր է, Հայկական գեղեցիկ տիպար մը կը ներկայացնէ:

Տիգրանակերտէ գրուած նամակ մը միտիթարական կերպով կը նկարագրէ տեղոյն մանչերու սրբանոցը: Ամբողջ ժողովուրդը կը գուրգուրայ որքանու լրայ և առատ նըւէրներ կը շնորհէ սրբանոցին, որ կը կառավարուի Տիգրանակերտի նախագահութեան ներքեւ գործող հոգաբարձութեան մը ձեռքով:

Նոյն քաղաքէ մէջ 80 Հայեր միարաներ են՝ տարեկան 300 ոսկիի նպաստ մ'ընել Հայոց Միացեալ ընկերութեանց, երկուս 500 ուսանողներու յատուկ դասարան մը Հաստատման Համար, որոց ուսուցիչները եւ գրեթեակն պիտոյքը Պօլսէն պիտի հոգայունին:

Ուրիշ թղթակից մը կը գրէ. «Տեղոյն Հայ վարժարաններն գաւառային աղքատիկ Միաց. Ընկ. վարժարանաց խնամակալութեան իրաւաստութեան տակ դնելու բանակցութիւնը կը շարունակուի:

Կը շարունակուի նաև այս մասին տեղոյն աղքատաց մէջ կամուար Հանգանակութիւն մը, որոյ գումարը 100 ոսկեոյ մօտ է:

Երանի՛ և գաղթական բարեկեցիկ ազգայինք ևս մասնակցէին այդ լուսածաւալ սուրբ գործոյն. ինչպէս նաև տեղոյն նորահաստատ սրբանոցին, որոյ մէջ նախ 25, այսօր 35 որբեր կը հոգացուին և կ'ուսանին մասնաւոր վարժարանի մը մէջ, որբանոցէն դուրս, եկեղեցւոյ բակը:»

Մ Ա Ն Ր Ա Ա Ռ Ի Ր Ք

Տ. Վաղինակ վարդապետ մեզ կը գրէ թէ Հարթֆըրտի և Նիւ Հէյվընի մէջ որբերուն ի նպաստ ըրած Հանգանակութեանց գումարը եգած է 116 տղար, զոր շրկած է անմիջապէս Բաղէշի և Ուարբերդի որբանոցներուն:

Պատ. Թուամայան անուն անձի մը ընթացից դէմ բողոքող քանի մը նամակներ ստացած ենք Ուէսթ Հոպօքընէն, որոնցմէ կը քաղենք Հետեւեալն. Տքթ. Թուամայան քանի մը ամիսներ առաջ Ուէսթ Հոպօքըն կ'երթայ ու տեղոյն Հայ երիտասարդութեան կը խոստանայ ձրի անգղիերէն դասախօսութիւն ընել երեկոներն ու կիրակի օրեր, պայմանաւ որ ժողովուրդեան կողմէ այս մասին դիմում մ'ըլլայ իրեն Հանրագրութեան մը ձեռով: Երիտասարդք կ'ընդունին պայ-

մանն. ու քիչ վերջ ժողովարան մը կը դրուի ժողովրդի տրամադրութեան տակ, ու պատուելի տօքթօրն ալ Հայոց Համար դասատու և բժիշկ կը կարգուի եկեղեցիի մը կողմէ՝ ամսական 40 տղար թոշակով: Դասերը կը շարունակուին, երբեմն ազգային երգեր կ'երգուին ու ասենախօսութիւններ ալ կ'ըլլան, և կիրակի օրեր ժողովարանը լսարան մը կը դառնայ: Օրին մէկը Պատուելին ամպիոն մը կը կառուցանէ սրահին մէջ անկիւնը. շարք մը վերջ թուղթերու մէջ փաթեցած աւետարան մը կը դրուի ամպիոնի վրայ. ժողովուրդըն բացատրութիւն կը պահանջէ. Տօքթօր Պատուելին կարգ մը բացատրութիւններ կուտայ և կը համոզէ թէ այդ գրքն եթէ Հոն չի դրուի, ինքն թէ կարող գալ և դառնալ Հայոց, և թէ աւետարանն չի պիտի կարդացուի բնաւ են. շարք մը կամ աւելի վերջ պատուելին տեսնելով թէ ժողովուրդը բազմացած է, ալ կը բռնայ պատարանն ու կ'ըստի կրօնական պաշտաման: «Ուզողը թող գայ, չ'ուզողը թող երթա՛» կ'ըսէ պատուելին, ու խոսովութիւնն կ'աւարտուի: Երբ շարք մը թուամայանի որբապետոյ ընթացքէն զայրացած կը մեկնի, ու այժմ Հանգանակութեան սիրած է՝ սեպհական վարժապետ մը վարձելու համար: Իսկ Պատուելին «Աւետարանն կը հարած ուր, որպէս կը հայածուէր դարբեր առաջ» ըսելով իր պաշտօնն ապահովել կը ջանայ և ունի այժմ 3-4 ժողովուրդ:

Ցաւալի՛ դէպքեր... Այս է կերպըն աւետարան քարոզելու: —Ճէրզիի մէջ եկեղեցի մը շինելու պաշտօն ունեցող յանձնախումբն կը ծանուցանէ թէ 130 տղարի պէտք ունի՝ հողը գնելու համար. և կը խնդրէ որ իրենց նուէրներն դնու չի հատուցանողներն փութան գանձապետը տեսնել:

Մեր Յրէշնոյի թղթակիցն կը ծանուցանէ թէ վերջերս տեղոյն Հայերէն կիրակոս Աժտեհարան անուն երիտասարդն և Յակոբ Շահամիրեան ծերունին իրենց մահկանացուն կընքած են, որոց թաղումն տեղի ունեցած է Օգոստոս 7ին:

Յիւլիանի թիւրքի վիրարու ժական վարժարանէն ընթացաւարտ ելաւ Տ. Թօփրաճանեան: Նորընծայ Տօքթօրը նոյն դպրոցի Հիւանդանոցի վիրարութեան բաժնին մէջ օգնականի պաշտօն կը վարէ այժմ:

Անցեալ շաբթու նորեկ Տ. Գասպար Գահանան Ուսթըր գնաց, ուր պիտի պաշտօնավարէ ց'նոր տնօրինութիւն:

Լինէն կը գրեն մեզ թէ տեղոյն երիտասարդներէն վեց անձինք Ուոլուրի Բողոքական Հայ երիտասարդաց անուն ընկերութեան մը կազմած են. այս վեց անգամք § 32. 50 մուտք տուած են և 33 շաբթակալն:

Վաղը Տօն վերափոխման Ս. Աստուածածնի լինելով՝ Ուաղ վարդապետ Ս. Պատարագ պիտի մատուցանէ Ս. Ոսկերեան եկեղեցւոյ մէջ:

ՎԻՆԻՆԻՍԻ ԵՐՈՒՍԱՂՆՄ ԵՐԹԱԼԸ

Ամերիկայի պատերազմը ժամանակէ մ'իվեր աշխարհի ուշադրութիւն գրաւած էր, անանկ որ շատ մը կարևոր դէպքեր անցան առանց կարևորութիւն գտնելու: Հիմայ որ խաղաղութեան ձիթեղին հպարտ Լուպանիացիք ձեռքերնին առին թնդաօթիներու սարսփէն, ու խաղաղութիւնն հաստատուեցաւ, քաղաքական դէպքերն կ'սկսին ուշադրութիւն գրաւել: Եւրոպական մամլոյ նիւթ եղող այժմեան խնդիրն Գերմանիոյ կայսեր Երուսաղէմ այցելելն է. անհամար ենթադրութիւններ յառաջ կը բերուին. այս անմեղ ուխտագնացութեան տակ ծածուկ բան մը կը նըւժարեն շատեր: Գերմանական մամուլը տարբեր կերպով կը նայ խնդրոյն, ի մէջ այլոց Գէօրգիէ Յայթունի արտասովոր բան մը չի տեսներ այս անմեղ ուխտագնացութեան մէջ: Բայց ոչ ոք կրնայ այսպիսի կարծեաց հաւատ ընծայելու չափ մ'իամիտ ըլլալ: Գերմանիա յայտնի կը տեսնուի թէ Թուրքիան ամբողջովին իւր ձեռաց մէջ առնելով զայն գերմանական վաճառականութեան հրապարակմ'ը դարձունել կը ջանայ. և որ աւելին է, ամեն միջոց կ'աշխատի ի գործ դնել, ինչպիսի աղքեցութիւնն չէզոքացնելով՝ Գերմանական աւելի զգալի դործել Սուլթանի երկիրներուն մէջ: Վիլհէլմ կայսեր անմեղ ուխտագնացութիւնն թափանցիկ քոչ մ'է որ կը ջանայ այս իրողութիւններն ծածկել աշխարհի աչքէն: Սակայն Ռուսիա լոկ ականատես ըլլալով չի բաւականանար. Զարբ. բացատրութիւն պահանջած է այս մասին Պօլսոյ եւ Պէրլինի կառավարութիւններէն: Վիլհէլմ կայսրը որոշած է Պօլսոյ չի գընացած և կամ Պօլսոյ այցելել վերջ ի վիճակով հանդիպել՝ Զարին հետ տեսութիւն մը ունենալու համար: Ստանաններ հազիւ գիտեն թէ ի՞նչ պիտի ըլլայ այդ տեսակցութեան արդիւնքը: Արդեօք կ'աւտրոսթոնի նկարագրած այս երկու անփորձ երիտասարդներն վերջնական հասկացողութեան մը պիտի գան մեր հիւանդ մարդու մասին...: Սակայն առ այժմ ճամբորդութեան պաշտօնական ծրագիրն է նախ Պօլսոյ, յետոյ Երուսաղէմ և Եփրատոս այցելել և ապա անցնել Եւրոպայ:

Սուլթանն թէ Պօլսոյ և թէ Երուսաղէմի մէջ մեծ պատրաստութիւններ կը տեսնայ եղեր. փողոցները կը մաքրուին ու կը յարթուին, զլլաւոր պողոտաներու տներն կը ներկուին և կը դարդարուին եղեր՝ ի պատիւ մեծ այցելուին:

Եւ փողոցի շուներն ալ Հրաման եղած է ժողովել, որպէս զի մարդակերպերն դժուարութիւն չի քաշեն...:

ՀԱՅ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՒ ԹՈՒՐԿ ԿԱՌԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Շարժում մէջ Գրիգոր Մանասեան, որ 1893ին Թուրքիոյ գնացած էր անձնական գործի համար, ու Թուրքիէն շղթայակապ Պօլսոյ զըր-

կուած էր Թուրք կառավարութեան կողմէն՝ իբր Քառակար ոք, իր խնդիր կարող փաստարանի մը յանձնեց, որ, Մանասեանի, անոր ընտանեաց ու զաւակաց կրած նեղութիւններու և կորուստներու փոխարէն՝ իբր վարձատրութիւն՝ 25 Հազար տոլար պիտի պահանջէ Բ. Դոնէ՝ Ուաշինկթընի արտաքին գործոց նախարարութեան միջոցաւ: Մանասեանի խնդիրն, որ շատերու ծանօթ է, ժամանակին ամերիկեան մամլոյ Համար օրուան խնդիր դարձած էր:

Պօլսոյ ամերիկեան դեսպանատան եւ Բ. Դրան միջեւ Յ. Ա. անուն Հայ քաղաքացիի մը պահանջին համար փոխանակուած այս տարուան թղթակցութիւնք, որոց օրինակներն մեզ զրկուած են, ճշգրիտ պատկերներ են Տաճիկ քաղաքականութեան: Մր. Թէրէլի ժամանակ, 1893էն իվեր այս անհատի պահանջը Դրան ու դեսպանատան մէջ խնդրոյ նիւթ ըլլալէ վերջ, Թէրէլ փաշա փետրվար 2 թիւ պաշտօնագրով մը կ'անգիտէ Յ. Ա. ի խնդրը ու մանրամասնութիւններ և թուականներ կը խնդրէ այդ մասին՝ քննութիւն մը բանալու համար: Մր. Անէլի յոնգակալը Պ. Բիւրը Մարտ 3 թուականի պատասխանով թրքական այս խաբես խորբես քաղաքականութիւնն փաշայի երեսին կուտայ ու լուծում կը պահանջէ Ա. ի խնդրոյն համար:

ԿՈՐՈՒՍ ԵՒ ԳԻՆՏ

Սէնթըրը Զօլս ընկող Յայի Մ. Կիրակոսեան Ուարբերդի Սօրսօր գիւղէն, ամիսէ մ'ի վեր անյայտացեր է. յիշեալի ուր, ո'ղջ կամ մեռած ըլլալը կը խնդրուի հաղորդը Վաղինակ վարդապետի կամ լրագրոյս Ուրբագրութեան:

Ամասիա Մարդպետունի (Կ. Պօլսոյ մայր վարժարանի նախկին աշակերտ) Հասցէն կ'ուզուի: Գրել Ուրբագրութեան:

Ղազարոս Մանուկեանի (ուսանող ի Գերմանիոյ) ո'ր քաղաք լինելն կը խնդրուի: Գրել Ուրբագրութեան:

AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212 ՄԵՏԱՔԱՆԱԿ (Հօլմէյլ) ՎԱՃԱՌԱԿԱՆՔ

Արեւելեան և Տաճիկական Ապրանայ Այս վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ի նիւ Եւրոք: Հոն կը վաճառուին ամեն տեսակ ստեղնագործներ, սեղանի, մէնթըլի, փիանօյի ևն. մետաքսեայ և ոսկեթել ծածկոցներ, Դամասկոսի վարագոյրներ, Բերիայի աղապանի, քէֆիա, ևն. ևն.:

Հայ վաճառականք կը հրաւիրուին փորձել միանգամ: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գրենք շափաւոր և ապրանքներն լաւագոյն լինելով՝ ուրիշ ո' և է տուն չէ կարող մրցիլ այս տան հետ: Վաճառատան Հասցէն ի վերև կը գտնէք: 2



ՇԱՐԱՍԹԵՐԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
Կը Հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, . . . . . ԳԱՆՁԱՊԵՏ.

ՐԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ

ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

|           |         |                      |           |
|-----------|---------|----------------------|-----------|
| Տարեկան   | ՏՂ. Սթ. | Տարեկան              | 10 Քրանք. |
| Վեցամսեայ | 1 50    | Բաժանորդագիրն ԿԱՆՈՒԿ |           |
| Եռամսեայ  | 75      | վճարելի է միշտ:      |           |
|           | 40      |                      |           |

Ծրար կամ նամակ ուղղել Հետեւեալ Հասցէին՝  
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱՐԱՍԹ, ՕԳՈՍՏՈՍ 27 1898.

ՐԱՐԵԳՐՈՒԹԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(Շար. և Վերջ)

Պատուելի Հայկուհի Բարեգործական Ընկերութեան սանձերը իր ձեռք մէջ պահելու փափաքն ու գաղափարը մոռնալով՝ ընդհանուր ժողով մը գործարելու է, որ մանրամասն հաշիւ տալէ ու ընկերութեան կանոնադրը հրատարակ հանելէ վերջ՝ հրաժարելու է վարչութեան միւս անդամներուն հետ, որոց քուէով կառավարուած է եղեր ընկերութիւնն անցեալ Փետրվարէն ի վեր: Այսպէսով կը գոցուի ի հարկէ ներկայ վարչութեան այս շրջանն ու անուանական խնամակալներն ալ, որք ո՛չ ձայն ու ո՛չ քուէ ունէին ներքին գործոց մէջ, բնականաբար կը դադարին պաշտօնէ: Այս կարևոր ու սկզբնական քայլն առնելէ վերջ՝ ընդհանուր ժողովոյ կը մնայ այնուհետև ընկերութեան խարտու չիմերը ամբողջն էլ և անոնց վրայ նոր շէնք մը կառուցանել՝ ժողովրդեան պէտքերն ու պահանջներն գէթ մասամբ լեցնելու չափ բաւական: Եւ երբ այսպէս ընդհանուր ժողովը կամ լրա ևս է ըսել ժողովուրդը իր խօսքին ու կամքին տէրն ըլլայ նորէն, իր առջին գործը կ'ընէ կանոնադրին վերաքննել, եթէ վերաքննութեան պէտք ունի. քանզի ներկայ վարչութեան հաստատած մի քանի քննադրութիւններն, անոնց տեղ նորեր գծել ու յանձնել զայնս նոր վարչութեան մը ի գործադրութիւն:

Երբ նոր վարչութեան մը վրայ կը խօսինք՝ ընտրութեան կարևոր խնդիրն իր ամբողջութեամբ կը կանգնի մեր առջև: Ընկերութեան մը յառաջդիմութիւնն թէեւ իր բոլոր անդամոց աշխատութեանն կախում ունի ընդհանրապէս, բայց անդամներու աշխատութիւնն արդիւնաւոր գործող մարմինն ընկերութեան մը վարչութիւնն կամ Գործադիր Ժողովն է. պատասխանատուութեան մեծ մասը անոր վրայ կը ծանրանայ ընդհանրապէս: Նաև մը չի քալեր եթէ մեքենաներ ու առագաստներ չունենայ, բայց ասոնք ամենն ալ անօգուտ կը դառնան եթէ հրամանատար պաշտօնեաներ, գործադիր նաւատիրներ պակասին՝ զանոնք տեղոյն ու պատագայից համաձայն գործածելու համար: Այս ամենն ըսելով մեր նպատակն է շնչտնել թէ ընկերութեան մը քուէարկու անդամներն ընտրութեան ժամանակ յարմար ու վտանգելի անձեր միայն պաշտօնի կոչելու են, եթէ կը փափաքին փորձութեան ուղիէն անվտանգ անցնել: Եթէ գործադիր պաշտօնեայն անկարող ըլլայ իր պաշտօնին, նաև զորս կ'երթայ շուտով ալիքներու կատաղութեանց:

Երբ Բարեգործական Ընկերութիւնն ընդհանուր ժողովոյ մը մէջ վերջնական հասկացողութեան մը գայ ու նոր ընտրութիւն ընելու աստիճանին հասնի, անդամք իրենց գաղտնի և լուս քուէով պատասխանատու պաշտօնն ծանրացնելու են արժանաւորներուն և միանգամայն այնպիսի անհատներու վրայ, որք գիտեն և փորձով ցոյց տուած են թէ «Ժողովրդի համար գործելու է ժողովրդով միայն»: Թամիկ, բանուոր և տգէտ դասակարգն ու անոր ձայնն և պահանջը անտես ընող պաշտօնեայն արդիւնաւոր չ'ըլլար ու երկար չ'ապրիր իր պաշտօնին մէջ: Մեր ազգային վերջի երկու Հոգաբարձութիւններն կենդանի նոր օրինակներ են այս մասին:

Սոսկալի սխալ մ'է նաև այսօրինակ գործերու մէջ պաշտօնի կոչել զբաղած վաճառականներն ու հարուստներն միայն: Գործադիր ժողովոյ մը բոլոր անդամներն եթէ կիւլակէնկեաններ կամ զբաղած վաճառականներ ըլլան, անկէ գործ մի՛ սպասէք, զի այդ կարգի վերաբերող մեր ազգայիններն իրենց անձնական գործերով ու հաշիւներով այնչափ զբաղեալ են որ ուրիշ ընդհանրական խնդրով մը տածելու անգամ ժամանակ չունին. և երբ այսպիսիք միասին կը բերուին, մանաւանդ յոգնած իրենց զբաղմանց

ծանրութեան տակ, պատրաստ են հաճութիւն տալ ամեն խնդրի՝ առանց անոր խորը թափանձելու փորձ մը փորձելու: Յիսուն հոգի չեն կարող կիւլակէնկեան մը խարել իր անձնական գործին մէջ, բայց ազգային այսօրինակ Բարեգործական ժողովի մը մէջ մէկ վարպետ անհատ կարող է տարբեր կիւլակէնկեաններ խարել, զի մարդը ժամանակ չունի խորհելու, միտքը յոգնած է կամ գրաւուած ուրիշ առևտրական մեծ գործերով: Ընկերութեան մը վարչական մարմնոյն մէջ, որ նոյն հաստատութեան սիրտն է, մէկ կամ երկու մեծատուններ միայն ունենալն բաւականէն իսկ շատ է: Այս տեսակ խումբի մը մէջ մեծատուն բազմազգաղ վաճառականին գործունէութիւնն չէ որ կը փնտռենք, այլ անոր հարստութեան բնական և բարոյական ազդեցութիւնն է որ կ'ուզենք՝ ժողովրդի վերջի վտանգութիւն ներշնչելու համար: Այս մեր ազգին յատուկ բան մը կարծելու չէ բնաւ, ամեն ժողովրդի մէջ նոյնն է այս խնդիրը, քանի որ հարստութիւնն, թէ՛ ներթափան և թէ՛ բարոյական, իր ազդեցութիւնն ունի ժողովրդի վրայ և պիտի ունենայ միշտ:

Սակայն բացառութիւններն չի մոռնանք: Ինչպէս ամեն ազգեր՝ նոյնպէս մենք ալ ունինք և կ'ունենանք երբեմն հարուստ դասակարգի վերաբերեալ դրամական գործերու մէջ թափախուած վաճառականներ, որք ի հարկին գիտեն նաև ազգային և բարեգործական ձեռնարկութեանց մէջ աշխատելու մտադրութեամբ ժամանակ տալ այնչափ որչափ կը ներքէ իրենց գործ ու զբաղում: Բայց ընդհանրապէս ազգային և բարեգործական ընկերութիւններու մէջ աշխատելու արամադրութիւն և յարմարութիւն ունեցող տարրը՝ ժողովրդի վրայ աւելի կարեկցութիւն ունեցող միջին դասու մակարաններն են. անոնց ժամանակը միւսներու ժամանակին չափ սուղ չէ. կրնան գոհել և սորված են գոհել զայն ազգային գործերու համար:

Յիշելու արժանի կէտ մ'ալ սա է թէ ժողովրդի մեծամասնութեան ձայնն ու համակրութիւնը չի վայելող մէկը, ինի հարուստ, աղքատ, գիտուն կամ տգէտ, սխալ է կոչել պաշտօնի մը որոյ գործը ժողովրդի հետ պիտի ըլլայ: Թող տալու է որ ժողովուրդը իր սիրած ու հաւնած անձը կոչէ պաշտօնի, վասն զի «ձայն բազմաց ձայն Աստուծոյն» սպաքէն:

Կրօնական խնդիրներէ զբուշանալու ենք ազգային ամեն ընդհանրական գործերու մէջ: Զգուշանալու են նաև մեր ընտրելի պաշտօնեանք: Կը կրկնեմք այս խնդիր և կը շնչտնեմք անոր վրայ, զի քանիցս դժբաղդութիւն ունեցանք թէ՛ մենք և թէ՛ ժողովրդէն շատեր խտրութիւններ նշմարել Բարեգործական ներկայ վարչութեան օրով, և ուրիշ գործերու մէջ:

Այսպիսի անպատեհութեանց տեղի չի տալու համար ընտրողներն իրենց քուէն պահելու են անոնց, որք ո՛չ թէ արտաքուստ, այլ ներքին համոզմամբ ո՛ր և է խտրութիւն չեն դնէր Հայուն և Հայուն մէջ: Կրօնական այսպիսի խտրութեանց կռիւն երբեմն մեր Հայրենի երկրին մէջ կը մղուէր. բայց հիմայ կարծես նոյնը Ամերիկայ փոխադրուած է՝ այս ազատ երկրին մէջ: Արդեօք Ամերիկա բողոքականութեան Երուսաղէմը ըլլալով աւելի առիթ կուտայ ոմանց Հայը Հայուն դէմ գիւնելու կրօնական զէնքերով . . .

Սակայն թող Հայ Բողոքական պատուելին միայն իւր Աւետարանը քարոզէ՝ առանց այս կամ այն «կորուսեալ ոչխար» որսալու ջանքեր ընելու, կամ առանց դիտողութիւններ ընելու այս կամ այն եկեղեցիին դէմ. թող Հրեանովմականներ օրը հազար անգամ «Հայր մեր ողջոյնը» կրկնէ. և թող «ոչ Գրիստոնէայ» Հայ Բանանն ու վարդապետը իրենց ազգային «նախապաշարեալ» հին եկեղեցիին մէջ Շնորհալիի և Նարեկացիի ողբերն ու շարականներն երգեն՝ առանց անոր բաժանեալ զաւակաց որբեգրած եկեղեցիի ու կրօնքը քննադատելու: Թող ասոնք ամենն ալ եկեղեցիէ դուրս իրարու նային որպէս երկու հարազատ եղբայրներ. և թող ժողովուրդն ալ հետևի ասոնց բարի օրինակին: Տարբեր կերպով խորհող ու վարտուողներուն դէմ ամեն ողջամիտ Հայ, բոլոր ազգը հաւաքաբար և անոր նահատակաց արևուններն ամենախիստ ԲՈՂՈՒՔԱԿԱՆՆԵՐ են, արգարացի բողոքարկուներ:

Իսկ մեք Բարեգործական ընկերութիւնը կազմակերպենք շուտով:

ՈՒՐ Է ՀԱՅՔԸ

Հայքի Ապրիլ 1 թուին մէջ կը կարդայինք.

«Հայքի հրատարակութիւնը աւելի ճոխ և օգտակար գործելու նպատակաւ ընկերութիւն մը կազմուելու վրայ է: Այս պատճառով յաջորդ թիւը, որ նոր Շրջան մը պիտի սկսի, պիտի հրատարակուի Մայիսի մէջ կամ գուցէ քիչ մ'աւելի ուշ, պատրաստութեանց աւելի կամ նուազ շուտով կատարելագործուելու համեմատ»

Սակայն, սիրելի պաշտօնակից, Մայիսն անցաւ, «գուցէ քիչ մ'աւելի ուշ» ալ անցաւ, բայց «աւելի ճոխ ու օգտակար» Հայքը լոյս աշխարհ չի տեսաւ տակաւին: Յաջորդ Ապրիլին ալ սպասե՞նք. Ըսէ՛ք մեզ, կը խնդրենք— Ապրիլ, թէ չ'ապրիլ:

ՓՐԿԵՆՔ ԶԵՅԹՈՒՆԸ

Օգոստ. 20, Պոսթոն.

Արտասահմանի Հայ մամուլը ըստոյգ և սրտաճմլիկ տեղեկութիւններ տուաւ Զէյթունի ներկայ տագնապալից կացութեան նկատմամբ: Հանդէպ այս վտանգաւոր վիճակին՝ Հայ ժողովուրդը գերագոյն պարտաւորութիւն մ'ունի դէպի քաղաքի լեռնակալները—գրամական նպաստ յըզել անմիջապէս:

Կ'առաջարկեմ որ իրենց դիւցազնութեամբ Հայութեան պատիւը փրկող այս մեր հայրենակիցներուն ինչպատ ժողովրդային հանգանակութիւն մը բացուի ՏԻԳՐԻՍԻ և Եփրատի սիւնակներուն մէջ, առանց ազմուկի և մեծախօսութեան:

Ամենէն աղքատ Հայը կրնայ գէթ 25 սէնթ նպաստել, իսկ քիչ շատ կարողութիւն ունեցողներն ալ իրենց ձեռքը քսակնուն տանելէ առաջ՝ թող խղճներուն վրայ դնեն և այնպէս կատարեն իրենց պարտքը:

Գաղցը է հաւատալ թէ գոնէ 2000 Հայ սիրով պիտի մասնակցի այսպիսի հանգանակութեան մը, որով կարելի է 5000 տղար գոյացնել շատ դիւրութեամբ և կարճ ժամանակի մէջ:—Պէտքը ստիպողական է:

Արդիւնքը, եթէ յարմար դատուի, կրնանք նպատակին հասցնել Հալէպի անգլիական և ամերիկեան հիւպատոսներու ձեռամբ:

Թող ամեն Հայ մասնաւոր ջանք ընէ համակրութեան ու գնահատման գործնական ապացոյցով մը ոգևորել ու փրկել Հերոս Զէյթունը: Յուսալով որ առաջարկս պիտի արժանանայ ժողովրդին ընդունելութեանը՝ կը փութամ ստորագրել իմ փոքրիկ նպատարը:

Կ. Յ. ՓԱՓԱՉԵԱՆ

Քարի-Պատարճ Զէյթունցիի այժմեան խնդիրը կարևոր հարց մ'է ամեն Հայու համար:

Յօդուածագրի առաջարկը ո՛չ միայն բանաւոր է, ու յարմար ժամանակին հրատարակ ընտրուած, այլ զայն գործադրել ջանանք ազգային նուիրական պարտականութիւն մ'է Հայ զաղթականաց: Մենք կը խորհնք թէ գործնական քայլն առնելու համար, օրինաւորութեան սահմանին մէջ, մի քանի վտանգելի անձերէ բաղկացեալ յանձնախումբ մ'ու ծանօթ գանձապետ մը որոշելու է անմիջապէս «երկաթը տաք տաք» կըրնալ ձեռնելու համար:

ՏԻԳՐԻՍՍ պատարաս է իւր բոլոր գործութեամբ ոյժ տալ այս ձեռնարկին, և վտանգ է թէ իւր գործակալներն ու աշխատակիցներն նուազ չի պիտի աշխատին քաղ Զէյթունցիին օգնութիւն մը հասցնելու գործոյն մէջ:

ԽՄՔ. ՏԻԳՐԻՍԻ

Նոր Հրատարակութիւն

Պատուելի Յ. Գ. Ֆիլետտի քարոզչները

ԵՐԿԱՅԻՆ ԼՈՅՍԵՐ

Նիւ Եորք—Տպագրութիւն Ամերիկեան Տետրակի Ընկերութեան

Գիրն է թէև երկու տղար, բայց փափաքողաց ձրի կը տրուի:

Պատուելի Ֆիլետտի քանի մը հայրենի և տանկերէն լեզուներով տրուած քարոզչներն են ասոնք, որք խոշոր տառերով տպագրուած են 417 երեսներու վրայ: Հեղինակը թէ է «քննադատներու առջև ելնելիք յատուկ պատրաստուած դպրոցի դասագիրք մը չէ» կ'ըսէ այս հատորին համար, բայց եւ այսպէս մի ուրիշ անգամ քանի մը խօսք կ'արժէ ըսել այս քարոզագրքի մասին:

ԿՈՉ ԱՌ ՀԱՅ ԱՉԳՆ

(Շարունակութիւն և Վերջ)

Ընդ որ եւր տայիս Ռուսաց թաղիք բաշի Աղա Աւետիք Արղումանեանցին, որ իսկոյն շապուով է մարդ ուղարկել և հեռացնել Տօն Գիշօթը իր բանակով և ազատում է Որբանոցը արևմտեղութեան թատերարեմ լինելուց: Իսկ դու, ի՞նչ ես տեսնում, Հայ ժողովուրդ, այս բոլոր ցաւալի անցքերում և դարձուածքներում՝ ճշմարիտ չէ՞ միթէ անմահ հայրենասէր բանաստեղծին խօսքը (Օտարըն ա՛հ միշտ է օտար): Եւ ի՞նչ պէս յանձնում ենք մեր ազգի իրզճալի երկսեռ որբերի բազմը այդպիսի մարդկանց, որոնք մինչև անգամ համարձակուում են իրանց խնամոց յանձնուած հայ որբերին դնել Օտարանեան հիւպատոսների հովանաւորութեան տակը, քանզի այս բոլոր դէպքերից յետոյ Տօլտօր Լէպուսովը համաձայնութիւն գոյացնում է այս մասին Օտարանեան Շահրէնտէր Րիզաբէկի հետ: Ինչպէս որ պարծենալով հռչակում է այստեղ ինքը Րիզաբէկը, որ այս քանի որ է Սալմաստ է եկած, թէ մի մեծ որբանոց հաստատուի Խոյնում և դուրի նրա անմիջական հսկողութեան տակ, և արդէն 34 հայ որբեր ընկել են այդ նոր սարքուած ուղևանում:

Պահանջը, խնամքն ու բարեմը մեր որբերին՝ մի քանի հազար հաստատութիւններում և փրկելն այդ թշուառներին հազար և մի սպառնալից վըստանգներից, որոնց նրանք միշտ պէտք է ենթարկուին օտարի հացը ուտելիս: Հայ ազգ, Հայ հասարակութիւն, Հայ բարերարներ, ձեզ են դիմում Սալմաստի Ղալասար գիւղի որբանոցի 50 խղճալի սաները՝ արցունք յաշկուես: Մեր սուրբ և անժըխտելի պարտականութիւնն է օգնել նրանք. «Ուր կամք կայ՝ անդ կայ նաև ճամբայ» ասում է ամերիկեան առածը:

Նրանք որ կարող են թող որդեգրեն մի մի որբ՝ վճարելով 100 ռուբլի, իսկ թող ամենքը իրենց լուսմանը գտնեն այս ազգային բարեխրական ընկերութեան դասարկ գանձանակը, որպէս զի յարատեւ է լինի մի ապաստան բազում խղճալի հայ որբերի, որոնցմով լիքն է դեռ Ասոր պատական:

Յանձնարարականին օրինակը Առ վիճակաւոր Առաջնորդն Հայոց Արարպատականին:

Ըստ պատկերանի վեհափառ Հայրապետի ազգին՝ Դիւանն հաղորդէ Ձերում Սրբազնութեան զի մասուցողն թղթոյ՝ Հայագն ուսումնական երիտասարդ Պ. Միհրան Պաղտասարեան, անձն վստահելի և քաջածանօթ նորին վեհափառութեան, ցանկայ ի սահման Պարսկաստանի բանալ զվազային Որբանոց. միտթարեայ վասն այսօրինակ մարդասիրական և հասարակօգուտ ձեռնարկութեան բարեսէր երիտասարդիս, վեհափառ Հայրապետն գիտակ գոյով բարեխրութեան ձերում, պատերաբայ Դիւանին յանձնարարել Ձերում Սրբազնութեան զՊ. Միհրան Պաղտասարեան և միանգամայն զազգօգուտ ձեռնարկութիւն նորին, և հաւատայ զի դուք ոչ զլսալիք ընձեռնել զկարևոր արձակցութիւն Ձեր, զի ձեռնարկութիւն այս յաղողութիւն գտնէ և արգելանաւոր լինիցի ի փառս Աստուծոյ, ի միտթարեայ ամենայն բարեխրաց, յօգուտ անխընամ և թշուառ որբոց և ի փառաւորութիւն անուան հիմնադրի, որոյ գործն արժանի է ամենայն համակրանաց և օգնութեան:

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓՍՆԷ

Արդ այսօր դիմում եմ ազգին՝ ներկայ հրաւիրով և յանձնարարութեամբ, ինչդրելով անմիջական օգնութիւն և պաշտպանութիւն մեր այս դուզնաբեայ ազգային ձեռնարկութեան:

Որբեր որդեգրողների, ինչպէս նաև բարեսէր նուիրատուների անունները շարունակ կը հրատարակուին ազգային լրագիրներում, որբերի նըկարները՝ կ'ուղարկուին որդեգրողներին, եւսամեայ հաշիւ և տեղեկագիր կը ներկայացուի բարեսէր հասարակութեան՝ լրագրաց միջոցով: Դըրամական ո՛ր և է նպաստներ կամ իրեղէններ, ինչպէս նաև գործի յաւաքութեան մասին որ և է թեւադրութիւններ, պէտք է ուղղել մեր հասցէին:

ՄԻՀՐԱՆ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ  
Հայկական Որբանոց  
Ղալասար, Սալմաստ, Բերդիս:  
Դրամ պարունակող նամակները և ծրարները պէտք է ապահովագրել: Մնամ միշտ անձնուէր ազգին:  
ՄԻՀՐԱՆ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ԽԱՉԱԳՈՂ ՄՄԱԼ Ի ՆԻՒԱՐՔ

Օգոստ. 15.

Ամսոյս 14 ին, Նիւարքում ձեռքս անցաւ մի յայտարարութիւն անգլիերէն լեզուով՝ «Ե՛կ լսելու մի գարմանալի աւետարանիչ՝ Կիլիկիացի թարսիցի Մեղքոնեան Սամուէլին», Գրիտոնեական երիտասարդաց ընկերութեան հօլի մէջ: Հետաքրքրութիւնս շարժուեցաւ, ուղեցի լսել Մեղքոնեանին, և գնացի. բացի ինձանից՝ բազմաթիւ ժողովականներ մէջ կար և մի ուրիշ հայ, բայց վերջիվերջայ խաշագողը չ'գիտէր որ նոյն բազմութեան մէջ հայ էլ կար: Մեղքոնեան մի քանի ծամածուծ բացատրութիւն տալուց յետոյ Հայաստանի և հայերի մասին, ամբողջ խօսակցութիւնը մասնաւորեց իր անձի վերայ. ասաց. — Հինգ տարի առաջ թարսիսի Ս. Պօղոս գօյշչում ուսանող էի, ամառուայ արձակուրդին պատեհուութիւն ունեցայ շրջակայ գիւղերը և քաղաքները պատել և Աստուծոյ խօսքը՝ քարոզել. ամբողջ Կիլիկիայում բացի Միտիոնարական գաղութներից, կամ այն տեղերը, ուր որ միտիոնարութեան ձեռքով աւետարան չի մըտել, բոլոր ժողովուրդը գտնուում է «խաւարի ստուերում», մի միայն մի հատ գրագէտ չ'կայ! Պարտնը իր սասածը հաստատելու համար փաստ էլ ստուաւ: «Այդ տարին, ասաց, Թարսիսից ուղեորուեցայ դէպի Ատանա, ճանապարհին թուրք գապտիաները ընկնցին ինձ և բոլոր թղթերս գրաւեցին՝ քննութեան համար. թղթերս չեմ միայն ինձ տարան Մէրսիսին կառավարութեան տունը, բայց այնտեղ՝ մի հատ գրագէտ չի գըտնուեցաւ որ թղթերս պարունակութիւնը կարգար. ուստի ինձ կապկապած ուղարկեցին Ատանա, ճանապարհին հանդիպեցինք շատ գիւղերի և շատերին ցոյց տուին թղթերս. վերջապէս թղթերս Ատանայում կարդացուեց, որոնք ոչ մի փաստակարան չէին պարունակում կառավարութեան դէմ: անհ, ես գնում եմ նորանց՝ իմ խաւար հայրենակիցների մէջ գործելու»: և վերջին խօսքերն արտասանելիս՝ ձայնը հեկեկում էր: Վերջը ներկայացայ և հարցրի. մի՞թէ ճշմարիտ են ձեր բոլոր պատմաները, մի՞թէ ամբողջ Կիլիկիայում մի քանի գրագէտ չ'գտնուեցաւ, կամ թուրքերը չի գտնան, մանաւանդ այս վերջին տասնեակ տարիներում թուրքերը հայերէն սովորում էին, մի՞թէ մինչև իսկ մի հայ գրագէտ չ'կար, որ թղթերը կարդար: Պը: Մեղքոնեան գունատուած, շփոթուած, իմ հար-

ցերին պատասխան էլ չ'տուաւ: Թող Կիլիկիացիները պատասխանեն այս հարցերին: Հայե՛ր, մեր շուրջը, մեր աչքի առաջ, իրանց ստոր շահի համար՝ անձոռնի կերպով՝ հայոց վարկը, հայոց պատիւը, խաշագող մարդիկ օտարների աչքում ձգում են, ապա հեռաւոր խուլ անկիւններում ի՛նչ հրէշաւոր ու պոչաւոր սուտեր են կլլացնում խեղճ ամերիկացիներին, մեր վարպետ խաշագողները: Այս կեղտոտ խաշագողին չ'արժէ դատի ենթարկել, կամ Լէնչի օրէնքով քարկոծել: Դուք դասեցէ՛ք Հայեր:

Ք Ն Ն Ա Դ Ա Տ Ա Կ Ա Ն

Օգոստ. 18, Պօթոն.  
Եփրատի 48րդ թուն մէջ «Վազէն» գրական աննիւրի սրբապօծութիւն մը սկսած է գործել. յանդուգն ձեռնարկ մը որոյ ինք մոռցած է յարել «Վէպիկ, Գիւղական կեանքէ»: Նպատակ չունիմ վազէի այդ անիմաստ ու անձոռնի յափռանքները իբր վէպ քննադատելու պատիւն ընել իրեն, այլ սոսկ մէկ երկու խօսքով սրբաբերէլ այդ մոռուեցները: Սակայն նախ քան գամէն՝ պիտ խնդրէի Եփրատի խմբագրութեանն որ այդ գրութեան «Շարունակելի» «վերջի» փոխելով խմբագրական գամբիւղը նետէ գայն:

Սյդ գրութեան մէջ իմաստի եւ բաներու սխալ գործածութեան աւելի քերականական սխալներն են որոնք աչքի կը զարնեն. և ինչե՛ր չը պիտի խորհին արտասահմանի հայերը և հայ գրագէտները Ամերիկայի հայոց մասին եթէ երբէք կարդան այդ գրչի թափփուքներն: Հարկաւ պիտի խորհին թէ որքա՛ն տգէտ լինելու է Միացեալ Նահանգաց հայ գաղութը որ այդ գրութիւնն իբր վէպ թերթերում մէջ կը կարդայ:

Առնենք յետագայ նախադասութիւնները:  
«Անոնց տանիքներ պղտիկ հողաբլուրներու նման դէպի դուրս տարածուած էր»: «Կեանքի գոյութեան կուրը իր բոլոր ծանրութեամբ ու դառնութեամբ ու է տրտունջ չէին խլեր անոր բնակիչներէն»:

«Վէպիկ» չի նախաբանը որ հագրւ Եփրատի մէկ սիւնակը կը գրաւէ, «Թ. Գիւղի» դիրքը քանի մը անգամներ կը փոխէ. մերթ լեռան գագաթ, մերթ լեռնադաշտին վրայ և երբեմն ալ, մոռացմամբ կամ դիտմամբ—չեմ գիտեր որը շիտակ է—լեռան ստորոտը ինչպէս, հետեւալ պարբերութեան(?) մէջ կրնաք տեսնել. «Լեռան բարձունքէն դիտող ոչ ոք կարող էր այդ գիւղի գոյութիւն ունենալը գիտնալ. միայն երբ թոնիրներ և օճախներ կը վառուին և սև ծուխ սեան նման կը բարձրանար այդ գաւաղայրէն և ոլոր մոլոր պտոյտները ներով օդին մէջ կը բարձրանար ու կ'անհետանար լեռան կատարի վրայ թաղկուած թուր սմպերու մէջ, որ յաճախ կը ծածկեն Անտոքը այդ բարձրութեան վրայ, նման փառապանծ պատիկ մը, զոր նա կը կրէ իւր վիթխարի ապառաժային գլուխ միշտ եւ յաւիտեան»: Ի՞նչ իմաստ կայ այս պարբերութեան մէջ. և այս մէկը առանձին չ'կենար պատկառելի գրութեան մէջ:

«Չառիվայր» բառը այդ տեղ եթէ իր բուն իմաստովը ըմբռնել ուզենք, պիտի պարտաւորուինք ընդունել որ ծուխը՝ հակառակ բնական օրինաց՝ դէպի վար կը բարձրանար(?), իսկ եթէ Պարոնը գառիվեր ըսել կ'ուզէ, այն ժամանակ գիւղին դիրքը պիտի փոխենք իբրև գագաթէն՝ լեռան ստորոտը:  
Յուսամ Պ. Վազէ չ'պիտի նեղ-

ուի, զի 2-3 անգամ ինք փոխած է, թող ըլլայ որ անգամ մ'ալ մենք փոխենք:

«Ժայռերու և ապառաժներու գոգեր տուներու և գոմերու մէջ նաև կը տեսնուէին»: Հոս գոգերը ցրցուածքներու տեղ գործածած է խեղճը: «Անոնց տանիքները հողաբլուրներու նման դէպի դուրս տարածուած էր, մէջտեղնին ունենալով մագաղակ երգիքներ որ կը ծառայէին թէ՛ իբր լուսամուտ և թէ՛ իբր ծրարները»: Հոս ալ Պարոնը կը թուի մերթ հոն Անտոքի բարձանց վրայ և մերթ հոս գալով ամեն տեսանքները անցեալ եղանակով կը գործածէ իր բայերը: Տեղ մը կ'ըսէ որ «Թ. գիւղացիք հող չունենալով խաշարածութեամբ կը պարապին», և անմիջապէս յետոյ մոռնալով կ'ըսէ որ, «Մեծերը վարուցանով զրաւելով ձըմբան պաշարը կը պատրաստէին»: Աստեղ և ասոնցմէ աւելին կ'երևի որ իր գրածը անձամբ կարդալու պատիւն ինքն իսկ զյացած է. մենք հարկաւ պիտի զլանանք: ԱՌԵՆԱՅԻ

ՀԱՅՐ ՄՍՇԹՈՑ Ի ՇԻՔԱՅՈՑ

Օգոստոս 15.

Օգոստոս 12 ի առաւօտուն հայր Մաշթոց վարդապետ Շիքալոյ ժամանեց. երէկ Կիրակէ կէսօրին ի ներկայութեան Շիքալոյի հայ գաղթականութեան աղօթք ու քարոզ խօսեցաւ: «Օգտուեցէ՛ք այս երկրէն, կամ Հայրենիք՝ ձեր մասին գլուխը դարձէ՛ք»: այս էր Հայր Մաշթոցի քարոզի ոգին:

Երկար առնէն ի վեր հայ եկեղեցականի կարօտը կը քաշէինք, երկարագոյն առնէն ի վեր լրած չէինք այսպիսի հրահանգիչ քարոզ: Երիտասարդ վարդապետը իւր նոր գաղափարներով անհուն կը տարբերի ընդարեան կղերներէ:

Բարին, գեղեցիկը և ճշմարիտը, կատարեալ մարդու մը նկարագիրը չինող այս երեք անունները, որք յաճախ յորջորջուած են թեքուս բերաններու մէջ, Հայր Մաշթոց իւր քարոզի մէջ յոյժ գործնական օրինակաւ բացատրեց. թէ բարին ստիճան արտայայտութիւնն է, թէ գեղեցիկն՝ մեր զգայարանաց հաճոյք պատճառող ամեն ինչ ի բնութեան, իսկ ճշմարիտն՝ մեր մտաց գաւակը ջերմ մաշափն և հաւասարակիւնն է բարին ու գեղեցիկին: «Ձանայէ՛ք որպէս մեղու՝ ձմեռուան մեղր պատրաստել Հայրենիքի համար այս երկրի, գրական, գիտական ու գեղարուեստական ծաղիկներէն, որք անհամար են իրենց որակով. յամենայն դէպս ի մտի ունեցէ՛ք Հայրենիքը. ինչ որ կ'անէք այս երկրէն, դրամ թէ գիտութիւն, Հայրենիքի համար թող ըլլան: Ձգուեցէ՛ք աշխարհաքաղաքացի կայ լինել. այն Հայր որ իր Հայրենիքին օգտակար չէ կարող լինիլ, դժուար է ինձ հաւատալ թէ մարդկութեան օգտակար կրնայ լինիլ:

Այս է ամփոփումը Հայր Մաշթոցի քարոզին, որ թէև զուրկ ճարտասանութենէ, այլ լի էր շինիչ ու հրահանգիչ գաղափարներով:

Յառաջիկայ Կիրակէ Պատարագ պիտի մատուցանէ, և կ'ինք հայ մանուկներ պիտի մկրտէ:

Շիքալոցիքս երջանիկ կ'զգանք, որովհետև Հայրենիքի յիշատակներ արթնցան մեր մէջ ի ներկայութեան Հայ եկեղեցւոյ ներկայացուցչին Գիտանաք գնահատել ու յարգել մեր արժանի եկեղեցականներն:

ՇԻՔԱՅՈՑԻՆ

Գործակալը—Յակոբ աղբար, քեզ բաժանորդ գրեմ՝ ՏԻԳՐԻՍԻՆ:  
Յակոբ—Ձէ, չեմ ուզեր: մեր գըրադարանինը 100 մարդու կը բաւէ:

